

ՇՈՒՇԱՆԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ

ՈՒՍՈՒՑԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՖԻՆԱՆՍԻԱՅՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.142

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ընդհանուր գծերով նկարագրվում է ուսուցչի պատրաստման համակարգը Ֆինլանդիայում, նրա ձևավորման համառոտ պատմությունը, ներկայացվում են ուսուցչի պատրաստման քաղաքականությունը, մոտեցումները, ավանդույթները եվրոպական կրթական համակարգի՝ ընդհանրապես և Ֆինլանդիայի կրթական համակարգի՝ մասնավորապես: Վիճակագրական տվյալներով հիմնավորվում են Ֆինլանդիայի գրանցած հաջողությունները կրթության ոլորտում, ներկայացվում է ուսուցչի պատրաստման պատմությունը, թվարկվում են այն ուսումնական հաստատությունները, որտեղ պատրաստվում և վերապատրաստվում են ուսուցիչները, համեմատվում են եվրոպական զարգացած երկրների և Ֆինլանդիայի ուսուցչի պատրաստման հիմնախնդրին վերաբերող մոտեցումները, մասնավորապես ուսուցչի պատրաստման սկզբունքները, կրթադաստիարակչական դասընթացների, ծրագրերի կառուցվածքային, բովանդակային, գործառական ընդհանրությունները և տարբերությունները: Համապարփակ ներկայացվում է ուսուցչի պատրաստման LUMA կենտրոնը, որը, նախատեսված լինելով բնագիտական առարկաներ սովորելու համար, մեծ դեր է խաղում ուսուցչի պատրաստման գործընթացը կազմակերպելու համար: Ուսուցչի պատրաստման գործընթացում LUMA կենտրոնի աշխատանքը կարևորվում է նաև նրանով, որ այն աջակցում է ուսուցիչների ցկյանս ուսուցմանը շարունակական կրթության համակարգում: Ֆիննական փորձի կարևոր առանձնահատկությունն այն է, որ խնդիր է դրվում սովորեցնել ուսանողներին լուծել տեղական բնույթի հետազոտական խնդիրներ:

Հիմնավորվում է աշխատանքի նորույթը առ այն, որ բացահայտված են Ֆինլանդիայում ուսուցչի պատրաստման մանկավարժական, սոցիալական գործոնները, կրթական քաղաքականության ազգային-պետական յուրահատկությունները:

Բանալի բառեր և արտահայտություններ. կարիերայի հետազոտ, հետազոտական պրակտիկա, առաջնորդ ուսուցիչ, ծնողների դպրոց, DBR նախագիծ, ռեֆլեկտիվ պրակտիկաներ, քննադատող պրակտիկաներ, շրջափուլային մտածողություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համեմատական մանկավարժության շրջանակներում իրականացվող հետազոտությունները կարևոր գործիք են տարբեր երկրներում կրթական քաղաքականություն պլանավորելու, իրականացնելու գործընթացում: Ֆինլանդիայի կրթության համակարգը՝ որպես PISA¹-ում և TIMS²-ում բարձր գնահատական ունեցող կրթական տիրույթ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրներում: Կրթության փոփոխությունները, մանկավարժները, կրթության կառավարման մեջ ներգրավված անձինք փորձում են հասկանալ ֆինն մանկավարժների հաջողության բանաձևը: Շատերը կարծում են, որ կրթության ոլորտում հաջողությամբ իրականացված բարեփոխումները պայմանավորված են ուսուցիչների անձնուրաց, արհեստավարժ աշխատանքով: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ուսուցչի պատրաստման ֆիննական փորձի վրա:

¹ PISA-ն OECD's ուսանողների միջազգային գնահատման ծրագիրն է: PISA-ն չափում է 15 տարեկանների՝ կարդալու, մաթեմատիկայի և գիտության գիտելիքներն ու հմտություններն օգտագործելու կարողությունը՝ իրական կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար:

The OECD's Programme Ուսանողների միջազգային գնահատման ծրագիրն է (PISA), որը վերանայում է, թե որքանով են ուսանողներն իրենց պարտադիր կրթության ավարտին (սովորաբար մոտ 15 տարեկան) ձեռք բերած որոշ գիտելիքներ և հմտություններ, որոնք էական են ժամանակակից հասարակություններում լիարժեք մասնակցության համար, մասնավորապես՝ ընթերցանության, մաթեմատիկայի և բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում:

² Training Information Management System. TIMS is a Web based solution to manage the training and its record for employees / students at the centralized location

Վերապատրաստման տեղեկատվական կառավարման համակարգ. TIMS-ը վեբ-ի վրա հիմնված լուծում է կենտրոնացված վայրում աշխատողների/ուսանողների համար ուսուցումը և դրա գրանցումը կառավարելու համար

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության առաջադիր խնդիրները լուծելիս կիրառվել են համեմատական, պատմահամեմատական, ճանաչողական-հասկացութային, մոդելավորման **մեթոդները**:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել ֆինն ուսուցիչների պատրաստման մասնագիտական և մանկավարժական առանձնահատկություններն արդի փուլում:

Հետազոտության հիմնախնդիրը լուծելուն նպաստել են այն հետազոտությունները, որոնք վերաբերում են Ֆինլանդիայի հանրակրթական դպրոցին (Դ. Ա. Վոլոդին, Զ. Լավոնեն, Ի. Ա. Շիրշովա, Պ. Զալբերգ), ուսուցչի մասնագիտական պատրաստմանը (Զ.Լաուկիա, Մ. Ակսելա, Պ. Ֆ. Քոնվել, Ռ. Մըռֆի, Ա. Ռաս և Կ. Հոյ), ուսուցչի գործառույթներին (Ի. Բ. Հիլթի, Ա. Լիբերման, Ռ. Յիրիեմե), ուսուցման պատրաստման սկզբունքներին (Հ. Նիեմի, Ա. Թում, Ա. Քալիոնենմի), ուսուցչի պատրաստման նորարական տեխնոլոգիաներին (Թ. Քորոնեն, Յ. Լավոնեն, Մ. Քուքքոնեն, Կ. Սորմունեն և Կ. Յուլոֆ, Հ. Նիեմի, Յ. Մուլտսիլտա, Ի. Լիպպոնեն և Մ. Վիլիտսոու), ուսուցչի պատրաստման մոդելներին (Կ. Լավինգտոն և Ի. Շիախ), ուսուցչի պատրաստման նախագծային տեխնոլոգիային (Սայրե, Ս, Ելեանոր և այլք):

Ինչպես հայտնում է BBC-ն՝ վկայակոչելով Pearson-ի և The Economist Intelligence Unit-ի համատեղ ուսումնասիրությունը, «Ֆինլանդիան ունի լավագույն կրթական համակարգը: Երկրորդ տեղում Հարավային Կորեան է, երրորդում՝ Հոնկոնգը, չորրորդում՝ Ճապոնիան, հինգերորդում՝ Սինգապուրը: Բրիտանական կրթական համակարգը զբաղեցնում է 6-րդ տեղը, ամերիկյանը՝ միայն 17-րդը: Լավագույն կրթական համակարգեր ունեցող երկրների 20-յակում ներառվել են նաև երեք երկիր Արևելյան Եվրոպայից: Այսպիսով, Լեհաստանը 14-րդ տեղում էր, Հունգարիան՝ 18-րդ, Ռուսաստանը՝ 20-րդ» (**Лучшая система образования в Финляндии, 2024**):

Ուսուցիչների պատրաստման պատմությունը Ֆինլանդիայում

Ֆինլանդիայում ուսուցիչների պատրաստման պատմությունը սկսվում է 1864 թվականից, երբ անցկացվեց ժողովրդական դպրոցների ուսուցիչների ուսուցման

առաջին սեմինարը: Նրանցից ոմանք հետագայում սկսեցին աշխատել արհեստագործական ուսումնարաններում: Հատկանշական է այն, որ այդ շրջանում լիցեյի ուսուցիչները պատրաստվում էին բուհերում, իսկ մասնագիտական առարկաներ կարող էին դասավանդել մանկավարժական կրթություն չստացած մասնագիտական փորձ ունեցող անձինք:

1900-ականների սկզբին իրադրությունը սկսում է փոխվել: Կարևոր պահանջ դարձավ այն, որ մասնագիտական առարկաների ուսուցիչը պետք է ունենար ոչ միայն փորձ, այլ նաև համապատասխան մասնագիտական կրթություն:

1909-ին Ֆինլանդիայում սկսեցին պատրաստել ուսուցիչներ գյուղատնտեսական ուսումնարաններում: 1920-ական թթ. Առևտրի և արդյունաբերության նախարարությունը կազմակերպեց մանկավարժական կամավոր դասընթացներ ուսուցիչների համար, որոնք տևեցին մինչև 1950-ական թվականները: 1931 թ. սկսեցին պատրաստել ուսուցիչներ բժշկական ուսումնարանների համար:

1987թ. ստեղծվեց 40 ուսումնական շաբաթ տևողությամբ տարբեր ոլորտների ուսուցիչների պատրաստման միասնական համակարգ: Այդ նպատակով երկրում գործում էր 20 փոքր կրթական հաստատություն: 1996–97 թթ. Ֆինլանդիայում ստեղծվել է կիրառական գիտությունների համալսարանների համակարգ: Խորհրդարանը որոշեց ուսուցիչներ պատրաստելու նպատակով ստեղծել կիրառական գիտությունների համալսարաններին կից հատուկ բարձրագույն ուսումնական հաստատություններ: Այդ տեսանկյունից առանձնանում է հատկապես ՀԱԱԳԱ-ՀԵԼԻԱ համալսարանը: Այսպիսով, երկրում հիմնվեց նմանատիպ հինգ մասնագիտացված համալսարան, որոնք մինչ օրս պատասխանատու են մասնագիտական կրթություն իրականացնող ուսուցիչների պատրաստման համար (Лаукиа Я., 2010):

Ինչպես հայտնի է, 1995թ.-ին Ֆինլանդիան դարձավ Եվրոպական համայնքի անդամ, որը կարևոր դեր է խաղում ողջ Եվրոպայում կրթության զարգացման գործում: 1999 թվականին 29 երկրների նախարարներ ստորագրեցին Բոլոնիայի

հոչակագիրը՝ եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքի վերաբերյալ: Բոլոնիայի գործընթացի նպատակն է բարելավել կրթության որակը՝ բարձրացնելով դասընթացների փոխակերպումը, կրթական ծրագրերի կառուցվածքի միավորումը, ուսանողների և համալսարանների ուսուցիչների շարժունակության բարձրացումը և տարբեր երկրներում ձեռք բերված որակավորումների ճանաչման հնարավորությունը:

Ուսուցչի պատրաստման LUMA կենտրոնը

Ուսուցչի պատրաստման կարևոր գործոն է LUMA կենտրոնի բացումը, որը նախատեսված է բնագիտական առարկաներ սովորելու ուսանողների մոտիվացիան զարգացնելու համար: Այն ստեղծվում է Հելսինկիում 2003 թվականին:

Այն անվանվել է Ֆինլանդիայի գիտություն Ուսումնական կենտրոն LUMA (L-ը և U-ն ֆիններեն գիտության առաջին տառերն են, իսկ Մ և A-ն մաթեմատիկայի առաջին տառերն են, որոնք ներառում են գիտությունը, տեխնոլոգիան և մաթեմատիկան (STEM) առարկաները: Առաջին տասնամյակում LUMA կենտրոնի հիմնական նպատակն է եղել կառուցել ազգային էկոհամակարգ STEM կրթության ոլորտում համագործակցության համար (**Commission of the European Communities, 2007**):

Ուսուցչի պատրաստման գործընթացում LUMA կենտրոնի աշխատանքը կարևորվում է նաև նրանով, որ այն աջակցում է ուսուցիչների ցկյանս ուսուցմանը շարունակական կրթության համակարգում (**Commission of the European Communities, 2007**):

Ցկյանս կրթության համակարգը ներառում է հետևյալ բաղադրիչները. 1) ուսուցչի պատրաստում բուհում (pre-service training), 2) ինդուկցիոն կամ ներմուծման փուլ և 3) ուսուցչի վերապատրաստման փուլ (in-service training): Ցկյանս ուսուցումը ստեղծվում է նախադպրոցական ուսուցիչների վերապատրաստման ընթացքում: LUMA-ն գործունեություն է ծավալում թե՛ տարրական, թե՛ միջին դպրոցի ուսուցիչների շրջանում: Ուսումնառության ընթացքում ապագա ուսուցիչներին տրամադրվում են իրական և կանոնավոր փորձառություններ: Նրանք հնարավորություն ունեն շփվել

երեխաների և երիտասարդների հետ՝ տարբեր գործունեություն ծավալելով LUMA կենտրոնում:

Կարևոր է այն, որ ապագա ուսուցիչների կրթությունը Ֆինլանդիայի համալսարանում հիմնականում հիմնված է մասնագիտական գիտելիքների և գիտական պրակտիկայի վրա (**Sayre Eleanor C., 2023**): Կրթության բովանակության տեսանկյունից կարևոր է այն, որ խնդիր է դրվում սովորողներին լուծել տեղական բնույթի հետազոտական խնդիրներ: Ընդ որում, ապագա ուսուցիչները յուրացնում են նախ և առաջ գիտահետազոտական մեթոդները կամ մեթոդաբանությունը:

Ըստ բազմաթիվ հետազոտողների, մասնագիտական զարգացումը սկսվում է շատ ավելի վաղ, դեռևս բուհական կրթության համակարգում (**Hilti E., 2011; Niemi H., Jakku-Sihvonen R., 2006**):

Ուսուցիչների մասնագիտական զարգացումը ցմահ գործընթաց է: Այն սկսվում է ուսուցչի բուհական կրթությամբ և ավարտվում է մինչև թոշակի անցնելը: Ընդհանրապես ցկյանս կրթությունը բաժանված է որոշակի փուլերի: Առաջին փուլը վերաբերում է ուսուցիչների նախապատրաստմանը նրանց բուհական կրթության ընթացքում, որտեղ նրանք տիրապետում են մասնագիտական գիտելիքներին և հմտություններին: Ուսուցչի պատրաստման երկրորդ փուլում ուսուցիչները դրսևորում են որոշակի ինքնուրույնություն: Նրանք սկսում են աշխատել դպրոցում: Այս փուլը սովորաբար կոչվում է ինդուկցիոն փուլ:

Երրորդ փուլը վերաբերում է շարունակական մասնագիտական զարգացմանը: Ուսուցիչները փորձում են հաղթահարել ուսուցիչ դառնալու սկզբնական մարտահրավերները:

Ուսուցչի պատրաստման համակարգում առաջնային նշանակություն ունի նաև այն, որ խնդիր է դրվում պատրաստել ռեֆլեքսիա անող ուսուցիչներ կամ ռեֆլեկտիվ պրակտիկանտներ: Նրանք դառնում են ինքնավար սովորողներ՝ սեփական կարիերայի երկարատև մասնագիտական զարգացման գործընթացում (**Conway P. F., Murphy R., Rath A. & Hall K., 2009**):

Ապագա ուսուցիչները կարող են ընտրել ուսումնական մոդուլներ՝ կախված իրենց կարիերայի հետագծից: Ուսումնական ծրագրերը փակ միավորներ չեն, և ուսանողները կարող են ձևավորել իրենց ուսումնական պլանը՝ ըստ պաշտոնական որակավորումների տեսակի կամ տեսակների (օրինակ. ստանալ միայն տարրական կամ միջնակարգ ուսուցիչների որակավորում կամ երկուսն էլ):

Ուսուցչի պատրաստման հետազոտական բաղադրիչը:

Ուսուցչի պատրաստման համակարգը տարբերվում է եվրոպական շատ երկրների և Հայաստանի կրթական համակարգերից նաև նրանով, որ ուսուցչի կրթության կարևոր բաղադրիչ է հետազոտական պրակտիկան (**Korhonen T., Lavonen J., Kukkonen M., Sormunen K. & Juuti K., 2014**):

Յուրաքանչյուր ապագա ուսուցիչ իրականացնում է հետազոտական աշխատանք, մասնակցում է գիտական սեմինարների կամ նախագծերի, սովորում է հետազոտության տարբեր մեթոդներ, որոնք կարող են օգտագործել բակալավրիատում և մագիստրատուրայում՝ ավարտական թեզ գրելիս: Ուսանողը պետք է ներգրավվի յուրահատուկ գիտելիքաստեղծ գործընթացի մեջ, զարգացնի իր քննադատական մտածողությունը: Ընդ որում, խնդիր է դրվում ոչ միայն ուսուցչի պատրաստման գործընթացում կիրառել նորարարական տեխնոլոգիաներ, այլև սովորեցնել նրանց կիրառել դրանք:

Այսպիսով, խնդիր է դրվում ձևավորել ուսանողների մեջ դրական վերաբերմունք հետազոտական աշխատանքի նկատմամբ:

Սա ենթադրում է, որ ուսուցիչները սովորում են կատարել վերլուծություն՝ շարունակաբար բարելավելով ուսուցման և ուսումնառության միջավայրերը: Ամենակարևոր ունակությունները, որ նրանք զարգացնում են հետազոտական ուսումնասիրությունների միջոցով իրենց քննադատական, անկախ մտածողությունը, հարցադրման մշակույթը, գիտական գրագիտությունը և երևույթները հարցերի միջոցով ուսումնասիրելու կարողություններն են (**Nordine J., Sorge S., Delen I. et al., 2021**):

Կարևոր է այն, որ Ֆինլանդիայում համալսարաններից շատերն ունեն ուսուցիչներ վերապատրաստելու ուսումնական կենտրոններ: Հատկանշական է այն, որ ուսուցչի բուհական կրթությունը իր բնույթով հետազոտական-տեղեկատվական է, որ շարունակական բնույթ ունի և կարող է շարունակվել ուսուցչի պատրաստման հետբուհական շրջանում, երբ նա արդեն ուսուցիչ է աշխատում: Կարևոր է, որ ուսուցչի պատրաստման բուհական ժամանակաշրջանում առաջադրվում են հիմնականում մարտավարական ծրագրեր, սակայն հետբուհական կրթությունն ավելի շատ ռազմավարական ծրագրեր է ներառում: Դրանով պայմավորված թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ծրագրերը պլանավորվում են ըստ համապատասխան նախագծերի իրականացման հնարավորությունների: Ընդ որում՝ ուսուցչի պատրաստման բուն բուհական դասընթացները պահանջում են ավելի երկար ժամանակ, քան հետբուհական դասընթացները: Նպատակն այն է, որ ուսուցիչները քննադատաբար մոտենան իրենց աշխատանքին և իրականացնեն հետազոտական նախագծեր, որոնց միջոցով նրանք ձեռք են բերում նոր կոմպետենցիաներ և նաև կիսվում են նոր գաղափարներով իրենց գործընկերների հետ:

«Առաջնորդ ուսուցչի» կոնցեպտն ուսուցչի պատրաստման ֆիննական մոդելում

Ուսուցչի պատրաստման ֆիննական մոդելում կարևոր դեր է խաղում «առաջնորդ ուսուցիչը»: Ըստ Լիբերմանի և Հիլթիի՝ առաջնորդ ուսուցիչները նպատակասլաց են և նրանք պետք է հստակ պատկերացնեն դպրոցի զարգացման տեսլականը, ինչպես նաև պետք է գիտենան, թե իրենց ինչ գիտելիքներ են անհրաժեշտ (Niemi H., Jakku-Sihvonen R., 2006): Նշված համատեքստում կարևորվում են համագործակցելու, փոխգործակցելու կարողությունները:

Ուսուցիչները պետք է կարողանան օգտագործել հետազոտության վրա հիմնված գիտելիքներ և հասկանալ, թե ինչ է անհրաժեշտ ուսուցման և ուսումնառության համար համապատասխան ծրագրերը կազմելիս:

Ֆինլանդիայում ուսուցչի պատրաստման մյուս առանձնահատկությունն այն է, որ դպրոցներում թույլատրվում է դասավանդել միայն մագիստրոսի կոչում ունեցողներին: Մյուս կարևոր գործոնն այն է, որ բավականին բարձր մակարդակում է կազմակերպվում ապագա ուսուցիչների մանկավարժական պրակտիկան:

Ֆինլանդիան համարվում է նորարարական մոտեցումների, տեխնոլոգիաների, դպրոցների, առաջավոր մանկավարժական գաղափարների երկիր (**Володин Д., 2011**): Կարելի է առանձնացնել «ծնողների դպրոցը», ինտեգրացիոն մանկավարժությունը և այլն, որի հեղինակներն են (Ու. Սիգնեուս, Ե. Լոնրոտ, Յ. Ռունեբերգ և Յ. Սնելման, Օ. Մանտրե, Յ. Ենգեստրոմ, Յ. Հումայնեն և այլք) մեծ ազդեցություն են ունեցել Եվրոպայում մանկավարժական նոր հարացույցի ձևավորման վրա: Ասվածի տիպական օրինակը EduCluster Finland կազմակերպությունն է, որը ստեղծվել է Ֆինլանդիայի Կրթության ազգային խորհրդի, տարածաշրջանային և քաղաքային իշխանությունների կողմից «լավագույն փորձի» օրինակները հեռարձակելու համար՝ ինչպես Ֆինլանդիայում, այնպես էլ այլ երկրներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցչի պատրաստման գործում մեծ դեր է խաղում, այսպես կոչված, նորարարական դպրոցական համայնքը, որը ներկայացնում է 21-րդ դարի պահանջների համահունչ համագործակցային հմտություններ զարգացնող կրթական միջավայր:

Հատկանշական է այն, որ համալսարաններում ուսուցիչների տարակարգը նախագծված է այնպես, որ ուսուցիչները բուհն ավարտելուց հետո կարող են հեշտությամբ բարձրացնել իրենց որակավորումը՝ ուսումնասիրելով համալսարանական տարբեր մոդուլներ, որոնք ներառում են տարբեր մասնագիտական, միջառարկայական թեմաներ:

Ուսուցչի պատրաստման հաջողության մյուս բանաձևն այն է, որ մեծ տեղ է հատկացվում դասավանդման կամ մանկավարժական պրակտիկային: Ընդ որում՝ ուսուցչի պատրաստման բուհական շրջանում խնդիր է դրվում պատրաստել

ռեֆլեկտիվ և քննադատող պրակտիկաներ: Դրա հետ մեկտեղ, ուսուցիչները պետք է կարողանան իրականացնել հետազոտական աշխատանք:

Ուսուցչի պատրաստման շրջադարձային փուլ է Ֆինլանդիայում LUMA կենտրոնների ստեղծումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Володин Д. (2011)**, Современный социокультурный контекст развития системы школьного образования в Финляндии, Педагогика и психология, N 1/7, Вестник ЧГПУ. 10, с. 40-45.
2. **Лаукиа Я. (2010)**, Профессиональная подготовка преподавателей в Финляндии, Образование и наука. Известия Уро РАО, журнал теоретических и прикладных исследований, N 8, с. 99-112.
3. **Лучшая система образования в Финляндии (2024)**, Почему финское образование одно из лучших в мире?. livejournal.com
4. **Commission of the European Communities (2007)**, Improving the quality of teacher education. Communication from the commission to the Council and the European Parliament 3.8.2007. Brussels, p. 23-34.
5. **Conway P., Murphy R., Rath A. & Hall K. (2009)**, Learning to Teach and its Implications for the Continuum of Teacher Education: A Nine-Country CrossNational Study. Report Commissioned by the Teaching Council, Ireland.
6. **Hilti E. (2011)**, Teacher Leadership. The “New” Foundations of Teacher Education. A reader. Lifelong Learning in Europe, N 17(4), p. 23-34.
7. **Korhonen T., Lavonen J., Kukkonen M., Sormunen K. & Juuti K. (2014)**, The Innovative School as an Environment for the Design of Educational Innovations, Teaching and Teacher Education, N 12(1).
8. **Niemi H., Jakku-Sihvonen R. (2006)**, Research-based teacher education. In R. Jakku Sihvonen, & H. Turku: Finnish Educational Research Association.

9. **Nordine J., Sorge S., Delen I. et al (2021)**, Promoting Coherent Science Instruction through Coherent Science Teacher Education: A Model Framework for Program Desig, Journal of Science Teacher Education, №32 (8).
10. **Sayre Eleanor C. (2023)**, “Design-Based Research.” In Research: A Practical Handbook// <https://handbook.zaposa.com/articles/design-based-research>. (23.01.2024).

REFERENCES

1. **Volodin D. (2011)**, Sovremennyy sotsiokul'turnyy kontekst razvitiya sistemy shkol'nogo obrazovaniya v Finlyandii /Modern socio-cultural context of development of the school education system in Finland/, Pedagogy and psychology, N 1/7, 10, pp. 40-45.
2. **Laukina R. (2010)**, Professional'naya podgotovka prepodavateley v Finlyandii /Professional training of teachers in Finland/, Education and Science. Journal of Theoretical and Applied Research, No. 8, pp. 99-112.
3. **The best education system in Finland (2024)**, Pochemu finskoye obrazovaniye odno iz luchshikh v mire? Why is Finnish education one of the best in the world?. livejournal.com
1. **Commission of the European Communities (2007)**, Improving the quality of teacher education. Communication from the commission to the Council and the European Parliament 3.8.2007. Brussels, p. 23-34.
2. **Conway P., Murphy R., Rath A. & Hall K. (2009)**, Learning to Teach and its Implications for the Continuum of Teacher Education: A Nine-Country CrossNational Study. Report Commissioned by the Teaching Council, Ireland.
3. **Hilti E. (2011)**, Teacher Leadership. The “New” Foundations of Teacher Education. A reader. Lifelong Learning in Europe, N 17(4), p. 23-34.

4. **Korhonen T., Lavonen J., Kukkonen M., Sormunen K. & Juuti K. (2014)**, The Innovative School as an Environment for the Design of Educational Innovations, Teaching and Teacher Education, N 12(1).
5. **Niemi H., Jakku-Sihvonen R. (2006)**, Research-based teacher education. In R. Jakku Sihvonen, & H. Turku: Finnish Educational Research Association.
6. **Nordine J., Sorge S., Delen I. et al (2021)**, Promoting Coherent Science Instruction through Coherent Science Teacher Education: A Model Framework for Program Design, Journal of Science Teacher Education, №32 (8).
7. **Sayre Eleanor C. (2023)**, “Design-Based Research.” In Research: A Practical Handbook// <https://handbook.zaposa.com/articles/design-based-research>. (23.01.2024).

Шушаник Акопян

Подготовки учителей в финляндии

Заключение

Ключевые слова и выражения: *карьерная траектория, исследовательская практика, педагогический лидер, школа родителей, проект DBR, рефлексивный практик, критический практик, круговое мышление.*

В статье в общих чертах описана система подготовки учителей в Финляндии, краткая история ее становления, представлены политика подготовки учителей, подходы, традиции европейской системы образования в целом и финской системы образования в частности. На статистических данных обоснованы успехи Финляндии в области образования, представлена история подготовки учителей, перечислены учебные заведения, в которых готовятся учителя, сравниваются подходы к проблеме подготовки учителей в развитых европейских странах и Финляндии, в частности принципы подготовки учителей, образовательных курсов, структурные, содержательные, функциональные общности и различия программ. Комплексно представлен центр подготовки учителей LUMA, который,

будучи предназначен для изучения естественнонаучных предметов, играет важную роль в процессе организации процесса подготовки учителей. В процессе подготовки учителей работа центра LUMA важна еще и тем, что он поддерживает непрерывное обучение учителей в системе непрерывного образования. Важной особенностью финского опыта является то, что он направлен на то, чтобы научить студентов решать исследовательские проблемы местного характера. Новизна работы основана на том, что раскрываются педагогические и социальные факторы подготовки учителей в Финляндии, национально-государственные особенности образовательной политики.

Shushanik Hakobyan

Teacher training system in Finland**Conclusion**

Keywords and expressions: *career trajectory, research practice, teacher leader, school of parents, DBR project, reflective practitioner, critical practitioner, circular thinking.*

The article generally describes the teacher training system in Finland, a brief history of its formation, presents the teacher training policy, approaches, traditions of the European education system in general and the Finnish education system in particular. It substantiates Finland's successes in the field of education with statistical data, presents the history of teacher training, lists the educational institutions where teachers are trained and trained, compares the approaches to the problem of teacher training in developed European countries and Finland, in particular the principles of teacher training, educational courses, structural, content, functional commonalities and differences of the programs. It presents the LUMA teacher training center is comprehensively, which, being intended for learning science subjects, plays a major role in the process of organizing the teacher training process. In the process of teacher training, the work of the LUMA center is also important in that it supports the lifelong learning of teachers in the continuing education system. An important feature of the Finnish experience is that it aims to teach students to solve research problems of a local nature. The novelty of the work is based on the fact that it reveals the pedagogical and social factors of teacher training in Finland, the national-state peculiarities of the educational policy.

Շուշանիկ Հակոբյան - Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ մանկավարժության տեսություն և պատմություն: shushan-hakobyan-97@mail.ru

Шушаник Акопян – Гюмри, учитель средней школы № 18. Соискатель Ширакского государственного университета. Интересы – теория и история педагогики. shushan-hakobyan-97@mail.ru

Shushanik Hakobyan – Gyumri, Teacher at Secondary School No. 18. Applicant at Shirak State University. Interests – Theory and History of Pedagogy.

shushan-hakobyan-97@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 05.02.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 12.12.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 21.03.2025թ.